



ԵՐԶԱՆԿԱԿԻՍՏԱՆԿ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԻՂԶԵՐՆ ՈՒ ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ս. ԷԶՄԵԼԺՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս. էջմիածնի Մայր Տաճարը 1642 տարվա հետքերն է: Նա Հայոց Հայրապետության առաջին Աթոռն է, որի հիմնադիրը Հայաստանի Բ լուսավորիչն է, հայոց առաջին հայրապետը: Ս. էջմիածնը իր հայրապետներով տվել են հայ ժողովրդին հայ գիր ու գրականություն, տվել են հայ գեղարվեստ, նարտապետություն, երաժշտություն և մանրանկարչություն, նպաստել են հայ մտքի զարգացման, կազմակերպել են Հայ Եկեղեցին և այս բոլորը, որի անունն է հայ մշակույթ, պահպանել և ավանդել են մեզ, այլ և եղել են հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանն ու պառնապանը: Այս նվիրական գործունեության համար է, որ հայ ժողովուրդը, սիրո և երախտագիտական զգացմամբ լցված, հյուսել է Ս. էջմիածնի և նորա հայրապետների մասին հոյակապ ավանդություններ ու առասպելներ, որոնք բնորոշում են այդ պատմական խոշոր հաստատության արժեքը: Ս. էջմիածինը իր անցյալով այսօր աշխարհիս ամենակույտուրական ազգին պատիվ կարող է բերել, իսկ մանր ազգերը նախանձել կարող են նորա փառքին, սակայն մենք ցարդ քիչ ենք ուշադիր եղել այդ հաստատության նկատմամբ:

Այդ մեծ հաստատությունն է, որի վերա կամենում եմ հրավիրել այս պատկանելի ժողովի ուշադրությունը:

Ժողովրդական մեծ Հայրապետի՝ Հայրիկի օրերից սկսած, մոտավորապես հիսուն տարի է անցել և Մայր Տաճարը քե՛ն ներսից և քե՛

զսից անմխիթար պատկեր ունի: Թիֆլիսի հայ հարուստներից մեկը՝ վաճառական Մանթաշյանը ժամանակին հանձն էր առել վերաշինել Տաճարը և կառուցել Վեհարան, որի բարի իղձը, սակայն, անկատար մնաց: Այս ժողովին է վիճակված ստանձնել այս մեծ գործի ձեռնեցությունը և կազմակերպությունը, և մեր զաղութահայ հարուստ եղբայրներին՝ այդ փառքի վաստակումը: Մեր իղձն է ներհնապես կա՛մ վերականգնված տեսնել նախկին նկարագրով և կա՛մ հայ գեղարվեստական նոր նկարներով նկարագրվել, հայ կյանքի և Ս. Գրքի պատկերներից օգտվելով, ինչպես օրինակ, Այվազովսկու աշխարհի ստեղծագործության նկարն է: Նոր նկարագրով և կա՛մ կշահենք, քանի որ Տաճարի հին նկարագրով մենք ունենք այլուր, իսկ նորը կլինի հառաջագիմական մի փայլ:

Արտաբնական կկամենայի կա՛մ մարմարի խոնապատ և կա՛մ գրանիտով պատած տեսնել: Բնականաբար սա մի ցանկություն է, որ ենթակա է ժողովի, և մասնագետ, հաշվավոր նարտապետների ու նկարիչների ֆրենդարկման: Միայն այս աշխատանքից հետո Մայր Տաճարի բազմաթիվ օտարազգի և տեղացի այցելուները Տաճարը դիտելուց հետո կհիանան ոչ թե զարմանա՞հայտնելով հայի անտարբերության վերա, այլ գովելով հայի հայրենասիրությունը և կույտուրականությունը:

(Ամենայն Հայոց ազգրբետի Տեղակալ Գեորգ արքեպիսկոպոս Զարեշյանի 1945 թ. ազգային-եկեղեցական ժողովում կարդացած զեկուցումից):

Սարսուռ եմ զգում հիշելով ծանր պարտականությունները և բազմապիսի հոգսերը, որ Ամենայն Հայոց Հայրապետի ուսերին է բարձած, և խորհում եմ՝ պիտի կարողանամ արդյո՞ք, ծերության հասակում, խղճի մտոք կատարել պարտքս. պիտի հաջողվի՞ արդյո՞ք ինձ՝ ներհնապես ու արտաքինապես հիմնովին ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ հայ հեադարյան բանկարժեք կորոզը՝ Ս. Էջմիածնի ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ:

(Ամենայն Հայոց Հայրապետ Ս. Տ. Գևորգ Զ. Վեհափառ Կաթողիկոսի անդրանիկ աշխարհաբար կոնդակից):

Ժողովրդ, հատուկ զեկուցում լսելով Ս. Էջմիածնի Տաճարի վերանորոգության և այդ նպատակով կատարված հանգանակության մասին, անհրաժեշտ և անհետաձգելի է համարում նրա կատարումը: Ժողովրդ գտնում է, որ 1642 տարվա պատմական այդ կորոզի կյանքի հարատևության և նրան վայելուչ վի-

ճակում պահելու գործը հայ ժողովրդի պատվի գործն է: Բայց նկատի ունենալով, որ Մայր Աթոռի պահպանության, ինչպես նաև ճեմարանի, տպարանի և այլ կարիքները ժողովրդական հանգանակությամբ պիտի հոգացվեն, ժողովրդ կկամենար, որ Տաճարի վերանորոգության այդ պատվաբեք գործի կատարումը մեր մեծահարուստ ազգայիններից մեկը կամ մի քանիսը միասին հանձն առնեին: Ուստի և ժողովրդ խնդրում է Ամենայն Հայոց նորընտիր և Կիլիկիո Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսներին՝ ձեռնամուխ լինել և հարաբերության մեջ մտնել այն անձանց հետ, որոնց հարկավոր կհամարեն այդ գործը գլուխ բերելու համար:

(Ազգային-կենդանական ժողովի 1945 թ. հունիսի 20-ի նիստում, Մայր Տաճարի հիմնական վերանորոգությունն ապահովելու համար Վեհափառի առաջարկած և միաձայնությամբ ընդունված բանաձևը):

